ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1951 Общественные науки

Զ. Գրիգորյան

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԻՆ

1

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որ սկսվել էր 19-րդ դարի սկզբին և ավարտվեց Պարսկաստանի և Ռուսաստանի միջև 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայի պայմանագրի կնքումով, հայ ժողովրդի պատմության ամենաուշագրավ էջերից մեկն է։

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացվելու հետևանքով հայ ժողովրդի նշանակալից մասը իր ուսերից թոթափեց հետամնաց շահական Պարսկաստանի դարավոր լուծը և իր բախտը ընդմիշտ կապելով ռուս մեծ ժողովրդի բախտի հետ՝ կանգնեց տնտեսական և կուլտուրական ավելի առաջադիմական ուղու վրա։

Չնայած ցարիզմի գաղութային նպատակներին և Հայաստանում նրա ստեղծած գաղութային ռեժիմին, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին օբյեկտիվորեն պետք է դիտել որպես դրական երևույթ, քանի որ դրա շնորհիվ հայ ժողովուրդը ազատվեց ֆիզիկական բնաջնջման սպառնալիքից, իսկ Արևելյան Հայաստանը դարձավ ազգային օջախ՝ աշխարհով մեկ ցրված հայերի համար, մի օջախ, որտեղ սկսեց զարգանալ հայ ժողովրդի նյութական, կուլտուրական և հոգևոր կյանքը։ Ռուսական առաջավոր դեմոկրատական կուլտուրան՝ գիտությունը, արվեստը և գրականությունը, ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատական հասարակական մտքը, հսկայական բարերար ու պրոգրեսիվ ազդեցություն ունեցան հայ կուլտուրայի վրա, հայ ռևոլյուցիոն հասարակական մտքի զարգացման համար։

Հայաստանի միացումը Ռուսաստանին մեծ չափով նպաստեց նաև Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների առաջացմանն ու զարգացմանը, արտադրողական ուժերի զարգացմանը, բանվոր դասակարգի երևան գալուն։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին՝ կատարվեց շնորհիվ ռուսական բանակի երեք խոշոր արշավանքների, որոնք տեղի ունեցան 19-րդ դարի սկզբներին՝ 1804, 1808 և 1827 թվերին։

Այդ միացումն ապահովող պատերազմական գործողությունների հաջող ընթացքը զգալի չափով պայմանավորված էր այն բազմակողմանի օգնությամբ, որ հարձակվող ռուսական զորքերին ցույց տրվեց անդրկովկասյան ժողովուրդների կողմից։ Վրաց, հայ, ադրբեջանական ժողովուրդները ռուսական բանակը դիտում էին որպես մի ուժ, որը գալիս էր իրենց փրկելու պարսկական և թյուրքական ամենադաժան ճնշումից. դրա համար էլ նրանք հնարավոր ամեն բան անում էին՝ այդ բանակի հաղթանակն ապահովելու համար։

Անդրկովկասյան ժողովուրդների հաղարավոր զինված զավակներ,

ռուս մարտիկների հետ ուս-ուսի տված, ջախջախում էին ատելի շահական Իրանի հրոսակախմբերին։

Ազնվականական-բուրժուական պատմագրությունն ամեն կերպ աշխատել է լռության մատնել այն ակտիվ օժանդակությունը, որ անդրկովկասյան ժողովրդական մասսաները ցույց են տվել ռուսական բանակին, լավագույն դեպքում հիշատակելով ազնվականության ծոցից դուրս եկած «տիտղոսավոր անձանց» մատուցած ծառայությունները «ռուսական գահին»։

Այսպես, դինվորական պատմաբան Պոտտոն[1] թողել է ռուսական զորքերի անդրկովկասյան բոլոր արշավանքների ամենամանրամասն նկարագրությունը։ Նա սիրով է պատմում Արևելյան Հայաստանի ազատագրման պատերազմի ամենամանր էպիզոդները, սակայն գերադասում է լռության մատնել այն ակտիվ օգնությունը, որ ռուս-պարսկական պատերազմների ժամանակ հայ աշխատավոր ժողովուրդը ցույց է տվել ռուսական զորքին։

Խոսելով Ցիցիանովի և Դուդովիչի արշավանքների մասին, նա նույնիսկ չի հիշատակում հայերի ցույց տված օգնությունը։ Իսկ եթե Պասկևիչի արշավանքի կապակցությամբ նա խոսում է հայերի կողմից ռուսական բանակին ցույց տրված օժանդակության մասին, ապա ընդգծում է առանձին հայերի դերը միայն, ստվերի տակ թողնելով հայ աշխատավորական մասսաների ակտիվ մասնակցությունը ռուսական գենքի հաղթանակի ապահովման գործում։ Համարյա այդպես են վարվել նաև Ն. Դուբրովինը[2] և մյուս պատմաբանները։

Սակայն պատմական իրականության օբեկտիվ ուսումնասիրությունը հանգեցնում է միանգամայն այլ հետևություններին։

Պատերազմական գործողությունների ամբողջ ժամանակամիջոցում ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ բուն Հայաստանում, ռուսական զորքը սիստեմատիկաբար ամենաակտիվ օգնություն է ստացել անդրկովկասյան ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի և առաջին հերթին հայ աշխատավոր ժողովրդի կողմից։ Հայերը ռազմական, տնտեսական, բարոյական և քաղաքական ամենաակտիվ օժանդակությունն են ցույց տվել ռուսական բանակին։

Հայտնի են Ցիցիանովի արշավանքի ժամանակ հոչակված շատ հայերի անուններ։ Ղարաբաղի վրա Արրաս-Միրզայի կատարած արշավանքի ժամանակ առանձնապես աչքի է ընկել տեղի հայերից Վանի Արուտյունովը (Աթաբեկովը) և նրա եղբայրը՝ Հակոբը։ Նրանք իրենց խիզախությամբ, հնարամտությամբ և անձնազոհությամբ քանիցս ռուսական մասնատված ջոկատներին փրկել են անխուսափելի կործանումից։ Գեներալ Ցիցիանովը անձամբ Վանուն նվիրել է իր սեփական ժամացույցը, իսկ Կովկասում գործող ռուսական զորքերի գլխավոր հրամանատարները (Ռտիշչև, Դուդովիչ, Երմոլով, Պասկևիչ) հիշյալ եղբայրների մատուցած ծառայությունները գնահատելով, նրանց շնորհել են պատվոգրեր և ոսկե մեդալներ։

---

[1] В. Потто. „Кавказская война в очерках, эпизодах, легендах и биографиях", СПБ, 1888 г.

[2] Н. Дубровин. „История войны и владычества русских на Кавказе". СПБ. 1886, т. III.

[3] В. Потто, „Первые добровольцы Карабага", Тифлис, 1902, стр. 24—25, 27 и т. д.

Ցիցիանովի արշավանքի առաջին իսկ օրերից հայերը, իրենց սեփական նախաձեռնությամբ, կազմակերպում էին կամավորական ջոկատներ, որոնք մարտնչում էին ռուսական զորքերի կազմում։

Գեներալ Գուդովիչի երևանյան արշավանքին մասնակցում էր հայկական հատուկ մի հեծյալ գունդ, բաղկացած 500 հայ կամավորներից, որի գեկավարն էր Գրիգոր Մանուչարյանը։ Այդ գնդի կամավորները արշավանքի ժամանակ աչքի ընկան իրենց բացառիկ խիզախությամբ և կայունությամբ։

Դրա հետ միաժամանակ՝ հայ բնակչության մեջ տարբերյալորեն կազմակերպվում էին աշխարհազորային ջոկատներ, որոնք մեծ մասամբ գործում էին պարսիկների թիկունքում և անխնա դատաստան տեսնում պարսիկ պաշտոնյաների հետ, պարսիկների ձեռքից փրկում գերության մեջ ընկած իրենց հայրենակիցներին, հաճախ կռվի բռնվելով անգամ պարսկական կանոնավոր զորամասերի հետ։

Հայ աշխարհազորայինները պատերազմական խոշոր գործողություններ ծավալեցին հատկապես Անդրկովկաս ներխուժած պարսկական հրոսակախմբերի դեմ՝ երկրորդ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ։

Հարյուրավոր հայ գեղջուկ աշխարհազորայիններ, ռուսական սահմանապահ ջոկատների զինվորների հետ ուս-ուսի տված, ոչ մի քայլ չնահանջելով, մարտնչում էին պարսկական զորքերի դեմ՝ Փոքր-Ղարաքիլիսայի մոտ և հերոսի մահով ընկնում անհավասար մարտերում։

Հայ աշխարհազորայինների փայլուն սխրագործությունների անմոռանալի նկարագրությունը, ժողովրդի ծոցից դուրս եկած պարտիզանական ջոկատների հրամանատարների պայծառ կերպարների նկարագիրը տվել է ռուս-պարսկական պատերազմի ժամանակակից Խաչատուր Աբովյանն իր «Վերք Հայաստանի»[1] հանճարեղ վեպի մեջ։ Աղասու և նրա խիզախ զինակիցների կերպարի մեջ Խ. Աբովյանը մարմնավորել է հայ ժողովրդի լավագույն գծերը, նրա հայրենասիրությունը և սերը դեպի ռուս ժողովուրդը։

Միայն հայերի նախաձեռնությամբ չէ, որ ստեղծվում էին հայ կամավորների մարտական գնդեր։ Դրանց անհրաժեշտությունը գիտակցում էր նաև Կովկասում գործող ռուսական բանակի հրամանատարությունը։

Անդրկովկասյան ռազմաճակատում գործող զորքերի թվական պակասը լրացնելու համար Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատարությունը ոչ միայն ամեն կերպ խրախուսում էր հայերից, վրացիներից և ադրբեջանցիներից տեղական ազգային մարտական գնդեր կազմակերպելու նախաձեռնությունը, այլև ամեն կերպ օժանդակում էր այդ գործին։ Երկրորդ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ գեներալ Պասկևիչը հրատարակեց հատուկ «Նախագիծ հայկական գումարտակներ կազմավորելու համար», որի մեջ մի շարք արտոնություններ էր վերապահում այդ ջոկատների մեջ մտնող կամավորների և նրանց ընտանիքների համար։ «Նախագիծը» կազմված էր հետևյալ կետերից.

«1. Հայերը գումարտակի մեջ մտնում են իրենց սեփական ցանկությամբ։

[1] Խ. Աբովյան, Երկերի ժողովածու, Երևան, 1948, հ. III։

2. Նրանք ընդունվում են ոչ փոքր, քան տասնութ տարեկան և ոչ մեծ, քան երեսուն տարեկան հասակում. բայց այս կանոնը այժմ չի՞ կարող իստիվ պահպանվել, այլ միայն պահանջվում է, որ մարդը բավականաչափ ուժ ունենա արշավանքի ծանրությունը տանելու համար։

3. Նրանք, կանանց ու երեխաների հետ միասին, ազատվում են բոլոր տուրքերից ու պարհակներից՝ ծառայության ամբողջ ժամանակամիջոցում։

4. Նրանք պարտավոր են ծառայել այնքան ժամանակ, քանի շարունակվում է պատերազմը Պարսկաստանի հետ, որից հետո ազատ կլինեն վերադառնալու իրենց տները կամ թե ծառայության մտնելու երկրային զորքի մեջ։

5. Ընդունման ժամանակ նրանց համար ընթերցվում են Պյոտր Մեծի կանոնադրության արտիկուլները, որոնք վերաբերում են գանցաությունների համար տրվող պատիժներին, որոնց նրանք ենթարկվում են զինվորականների հետ համահավասար։[1]

Այնուհետև հրահանգի մեջ մանրամասն ցուցումներ են տրվում, թե անհրաժեշտ է հատուկ մարդիկ ուղարկել Անդրկովկասի հայաբնակ շրջաններ՝ այդ գնդերի համար կամավորներ հավաքագրելու նպատակով։ Հրահանգի 12-րդ կետում մանրամասն շարադրվում է նախագծված հայկական գումարտակների կազմը, սպառազինությունը և շարային ծառայության կարգը, 15-րդ կետում ասվում է, որ գումարտակի հրամանատարը կլինի ազգությամբ հայ, իսկ 34-րդ կետի համաձայն՝ «հրամանի խոսքերը պետք է լինեն հայերենով։[2]

Երկրորդ ռուս-պարսկական պատերազմի հայտարարման առաջին իսկ օրերից Թիֆլիսը դարձավ հայ կամավորներից կազմակերպվող մարտական գումարտակների կենտրոն։ Թիֆլիս կամավորներ գալիս էին Անդրկովկասի և Հայաստանի բոլոր շրջաններից։ Նրանք համառորեն պահանջում էին ընդունել իրենց և շուտափույթ ռազմաճակատ ուղարկել, որպեսզի զենքը ձեռքին մասնակցեին հայրենիքի ազատագրման գործին, կատարեին իրենց հայրենասիրական պարտքն իրենց ժողովրդի առաջ։

1827 թվականի մայիսին Թիֆլիսում կազմակերպվեց հայ կամավորների առաջին գունդը, որ բաղկացած էր 117 մարտիկից։ Կարճատև շարային նախապատրաստությունից հետո ջոկատը Թիֆլիսից դուրս եկավ դեպի Էջմիածին, որպեսզի միանա Երևանի տակ գործող ռուսական զորաբանակին։[3]

Կամավորների այդ առաջին գումարտակի կոմպլեկտավորման մասին Թիֆլիսի զինվորական նահանգապետ գեներալ-ադյուտանտ Սիպյագինը գլխավոր շտաբի պետ բարոն Դիբիչին զեկուցել է.

«Պոլկասյան Առանձին կորպուսի հրամանատար պարոն գեներալ-ադյուտանտ Պասկևիչն ինձ կարգադրել է զբաղվել կամավոր կերպով գրնդեր մտնել ցանկացող հայերից գնդեր կազմակերպելու գործով։

---

[1] ՍՊՎՍԱ (Կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվ), ֆ. ВУА, д. 4336, лл. 2—5

[2] ՍՊՎՍԱ. ֆ. ВУА, д. 4936, лл. 2—5.

[3] Նույն տեղում, л. 7—11.

Ըստ սրում, Առաջին գունդը, թվով 117 մարդ, արդեն կազմված է, պատշաճ ձևով սպառազինված և, արշավանքի համար անհրաժեշտ ամեն ինչով մատակարարված, կորպուսի պարոն հրամանատարի հրամանի համաձայն այսօր Թիֆլիսից ուղարկվել է Էջմիածին՝ գործող զորքերին միանալու համար»։[1]

Հայ կամավորներից մարտական գնդեր ստեղծելու այս հաջող փորձից հետո, մասնավորապես պարսիկների դեմ հայ կամավորական գնդի ձեռք բերած մարտական առաջին հաջողություններից հետո, Կովկասի ռուսական դեկավար շրջանները, Կովկասյան կորպուսի հրամանատարության հետ միասին, սկսեցին էլ ավելի վճռականորեն կազմակերպել հայկական նորանոր կամավորական գնդեր։ Թիֆլիսի զինվորական նահանգապետ գեներալ Սիպյագինը 1827 թվականի մայիսի 24-ին հայ բնակչությանը դիմեց մի հատուկ կոչով, որի մեջ խոսում էր այն խոր վստահության մասին, որ ռուսական բանակի հրամանատարությունը տածում է դեպի հայերը։ Գեներալ Սիպյագինն իր կոչի մեջ առանձնապես ընդգծում էր հայ ռազմիկների անձնազոհությունը և հայերի ջերմ սերը դեպի ռուսները։

«Անցյալ տարի պարսկական զորքերի՝ մեր սահմանները ներխուժելու պահից հայերը աչքի են ընկել իրենց անվեհերությամբ ընդդեմ թշնամիների, անսասան կայունությամբ՝ պատահած ազետների մեջ։ Նորին մեծությանը ցանկալի է սույն պատերազմում իր քաջ զորքերի թվում ունենալ այստեղի հայերից կազմված հատուկ աշխարհազոր...

Հայերը ցնծությամբ պատասխանեցին արված կոչին։

Կոչը բաց թողնելու երրորդ օրը ես տեսա զենքի տակ հավաքված հայկական առաջին գունդը։ Նոր մարտիկները մեկնեցին բաժանելու ռուսական զենքի դժվարություններն ու փառքը։

Ես համոզված եմ, որ նրանց եղբայրակիցներից շատերը կցանկանան հետևել այնքան գովելի այս օրինակին, որի համար էլ հարկ եմ համարում հրապարակել նախագիծ՝ կազմվող հայկական աշխարհազորի համար, որպեսզի յուրաքանչյուր ոք, որ կամավոր կերպով մտնում է նրա շարքերը, կարողանա իմանալ, թե ինչ ժամկետով և ինչ պայմաններով է ինքը պարտավորվում ծառայել։

Հայեր, ձեր ջանասիրությունը ըստ արժանվույն վարձատրված է... Դուք ձեր սեփական դրոշների տակ կունենաք ձեր սեփական գնդերը. ձեզ զենք է տրվում ձեր ճնշված եղբայրներին հանգստություն բերելու համար, ձեր ընտանիքներին անվտանգություն ապահովելու համար...»։[2]

Կոչը լայն արձագանք գտավ հայերի սրտում։ Կոմպլեկտավորվեցին հայկական նորանոր կամավորական գնդեր, որոնք կարճատև շարային ուսուցումից հետո գնում էին դեպի Երևան՝ պարսիկների դեմ մղվող պատերազմական գործողություններին մասնակցելու համար։

Առաջին մարտական գնդի կազմավորումից անմիջապես հետո կոմպլեկտավորվեց հայկական երկրորդ գունդը,[3] որի մասին Սիպյագինը գեներալ Դիրիչին զեկուցում էր.

---

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4336, л. 6։
[2] Նույն տեղում, д. 4338, л. 51.
[3] Նույն տեղում, д. 4312, л. 113.

«Իմ հսկողության տակ Թիֆլիսում կազմավորված հայկական երկրորդ գունդը, թվով հարյուր մարդ, սպառազինված է և մատակարարված արշավանքի համար անհրաժեշտ ամեն ինչով. գունդը Խերսոնի գրենադերական գնդի ենթապորուչիկ Ակիմովի հրամանատարությամբ ես այժմ Թիֆլիսից ուղարկեցի՝ Երևանի տակ գտնվող գործող զորքերին միանալու համար։[1]

Նույն 1827 թվականի օգոստոսին Թիֆլիսում կազմակերպվեց հայկական երրորդ մարտական կամավորական գունդը, որը օգոստոսի 21-ին արշավանքի դուրս եկավ և սեպտեմբերի 4-ին միացավ Երևանի տակ գործող ռուսական զորքերին։

Հայ կամավորների երրորդ գնդի կոմպլեկտավորման մասին, Թիֆլիսի զինվորական նահանգապետն անմիջապես զեկուցում է գեներալ Դիբիչին։

«... Այստեղ կազմավորված հայկական երրորդ գունդը[2], թվով 67 մարդ, պաշտոնաթող կապիտան Բերուխովի հրամանատարությամբ սույն ամսի 21-ին, անհրաժեշտ ամեն ինչի մատակարարմամբ, դուրս եկավ դեպի Երևան, ըստ տրված մարշրուտի, գեներալ-լեյտենանտ Կրասովսկու զորախմբին միանալու համար։[3]

Ռազմաճակատ մեկնող հայ կամավորական գնդերի երևալը հայկական գյուղերում՝ հսկայական ոգևորություն և ցնծություն էր պատճառում հայ բնակչությանը։ Ճանապարհին այդ ջոկատներին նորանոր կամավորներ էին միանում հայ երիտասարդներից, այնպես որ, նշանակված տեղը՝ Երևանի տակ հասնելու օրը գնդերի թիվը սովորաբար զգալի չափով մեծանում էր։ Փոքրիկ ջոկատը դառնում էր իսկական գունդ, մարտական լուրջ միավոր։ Այսպես, հայկական առաջին կամավորական գունդը, որը Թիֆլիսից 1827 թվականի մայիսի 17-ին մեկնելու օրը կազմված էր ընդամենը 117 մարտիկից, ճանապարհին համալրվելով նորանոր մարտիկներով, Երևանի տակ հասնելիս արդեն ուներ ավելի քան հազար մարտիկ։

Այդ ժամանակվա վիճակագրերից մեկում կարդում ենք.

«Գեներալ Պասկևիչը ամսույս 12-ին մեկնեց Երևան։ Նրա թույլտվությամբ վրաց և հայոց 500 իշխաններ ու ազնվականներ, առաջնակարգ տոհմերից, սպառազինված և ձիավոր, հետևեցին նրան։ Թիֆլիսում նոր լեգեոն կամ գունդ է կազմվում հայերից, որոնք ոգևորությամբ մտնում են նրա շարքերը։ Մայիսի 15-ին հայոց տաճարում մաղթանք կատարելուց հետո, նրանց երդումի տարան և նոր գրոշ տվին։ Ամսիս 17-ին նրանք մեկնեցին Թիֆլիսից և գնում են դեպի Երևան։ Ճանապարհին նույնպես պատրաստվել են հայեր, որոնք կմիանան իրենց եղբայրակիցներին։ Նրանց թիվը հասնում է մինչև 1000 հայի։ Բոլորն էլ վառվում են հավատարմության և նվիրվածության ոգով։»

Այդ նույն հայկական առաջին կամավորական գնդի մասին Ա. Երիցյանը գրել է.

«Ճանապարհին հրճվանոք դիմավորում էին հայ գունդին գյուղացի

---

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4336, л. 9.
[2] Նույն տեղում, д. 4312, л. 16.
[3] Նույն տեղում, д. 4336, л. 11.
[4] Նույն տեղում, д. 4338, л. 38.

հայքը և իրանք էլ միանում էին նորա հետ, այնպես որ դեռ Երևանի սահմանը չհասած, հայ զինվորաց թիվը հազար հոգուց ավելի էր։[1]

Երևանի պաշարման ժամանակ Օշականի, Աշտարակի, Էջմիածնի և Արևելյան Հայաստանի մյուս շրջանների գյուղացիները տասնյակներով հեռանում էին իրենց գյուղերից, կազմում փոքրիկ զինված ջոկատներ և, միանալով ռուսական բանակին, հերոսաբար կռվում էին Երևանի ազատագրման համար։

Այսպիսով, հին բերդի պարիսպների տակ, ռուս քաջ զինվորների հետ ուս-ուսի տված, զենքը ձեռքին կռվում էին հազարավոր հայ գյուղացիներ, ըստ որում, նրանցից շատերը մարտերում աչքի ընկան իրենց անձնազոհությամբ և քաջությամբ։

Անհրաժեշտ է նշել, որ Անդրկովկասում գործող ռուսական զորքերի սակավաթիվության պայմաններում անդրկովկասյան ժողովուրդների կողմից Կովկասյան կորպուսին ցույց տրվող ռազմական օգնությունը մեծ նշանակություն էր ստանում։ Այս հանգամանքը հաճախ իրենց հայտարարությունների մեջ հարկադրված էին խոստովանելու նաև Կովկասում գործող ռուսական զորքերի հրամանատարները։

Այսպես, կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվի փաստաթղթերից մեկում ասված է.

«... Ռուսական ցիրուցան զորքերը, առանց որևէ անհրաժեշտ պատրաստության, հայերի ու վրացիների զգալի աջակցության պայմաններում, կարողացան շուտով հետ մղել թշնամուն»։[2]

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի մասնակից գեներալ Ն. Ն. Մուրավյովը գրել է Երևանյան արշավանքի ժամանակ հայկական մի գնդի կազմավորման ու մարտական գործողությունների մասին։

«Հայկական գնդին տրվեց դրոշակ, որը նկարազարդված էր Թիֆլիսում, և գունդը գուրս եկավ բարի կամքով ու արտասովոր փութեռանդությամբ, արդեն ունենալով երիտասարդ զինվորների ոգի... Սվինավոր հրացաններով զինված՝ գունդն ուներ շարային զորքի տեսք, հնազանդվում էր պետերին, շարք էր կանգնում և անց էր կացված մատյանների մեջ... Մարտի մեջ նրանք իրենց ցույց տվին ինչպես վայել է զինվորներին, և օրդուբադյան նահանջի ժամանակ կռվում էին... պարսիկների դեմ, ինչպես կարելի էր ցանկալ։[3] այս նոր զորքը ամենալավագույն հույսերն էր ներշնչում ժամանակի ընթացքում տեղական ուժերից զգալի կորպուս կազմակերպելու համար, տեղական ուժեր, որոնք կարող էին այստեղ փոխարինել կլիմայի պատճառով Վրաստանում գտնվող ռուսներին...

Մեզ միացած այս առաջին գունդը... ուժեղանում էր պարսկական գումարտակներից փախած հայ սարվազներով և Երևանի խանության բնակիչներով։ Բոլորն էլ հավատարմության երդում էին ընդունում և մեզ հետ կատարում բոլոր արշավանքները...»։[4]

---

[1] Ա. Սրբիցյան, «Ամենայն հայոց կաթողիկոսություն և Կովկասի հայք 19-րդ դարում», մասն Ա, էջ 284։

[3] ЦГВИА, ф. ВУА, д. 4338, л. 7.

[3] Ընդգծումը մերն է,— Ջ. Գ.։

[4] Г. Эзов. „Сношения Петра Великого с армянским народом", СПБ, 1898, стр. CXXVI. Տես նաև „Русский архив", 1889, № 9.

Ռուսական բանակին մեծ օգնություն էին ցույց տալիս ոչ միայն հայերից կազմակերպված մարտական կամավոր գնդերը կամ Երևանի ու նրա շրջակայքի հայ քաղաքացիական բնակչությունը, այլև այն հայերը, որոնց պարսիկները բռնությամբ մտցրել էին իրենց զորքի մեջ։ Արձանագրված են ոչ քիչ դեպքեր, երբ պատերազմական գործողությունների եռուն պահին հայերը լքում էին պարսկական զորքերի շարքերը և անցնում ռուսների կողմը, իրենց զենքն ուղղում էին պարսիկների դեմ, հերոսաբար պայքարում իրենց հայրենիքի պարավոր ստրկացնողների դեմ։ Այս բանի համար վառ օրինակ կարող է ծառայել հայ գյուղացի Հակոբ Հարությունյանի անձնազոհ վարմունքը։[1]

Դիպուկ նշանառու-հրետանավոր Հակոբ Հարությունյանը բռնի կերպով ծառայության էր կանչված պարսկական բանակում։ 1827 թվականի օգոստոսի 17-ին, երբ գեներալ Կրասովսկին շտապում էր օգնության հասնելու պարսիկ զորքերի կողմից պաշարված Էջմիածնին, կատաղի մարտ տեղի ունեցավ Օշականի մոտ։ Կրասովսկու փոքրիկ ջոկատը շրջապատման մեջ ընկավ և լուրջ վտանգ էր սպառնում նրան։ Ճակատամարտի ամենակրիտիկական պահին, երբ պարսիկները պատրաստվում էին վճռական հարված հասցնելու ռուսական ջոկատին, Հակոբ Հարությունյանը իր թնդանոթի փողը շրջեց պարսիկների շարքերի վրա, գետին տապալեց բազմաթիվ պարսիկների և սաստիկ խուճապ առաջ բերեց ողջ մնացածների մեջ։ Հայ թնդանոթաձիգի հերոսական արարմունքը մեծ օգնություն ցույց տվեց դժվարին կացության մեջ ընկած ռուսական ջոկատին։

Երևանի Սարդարի մարդիկ բռնում են Հակոբ Հարությունյանին և տանում Հյուսեին խանի մոտ։ Խանը հրամայում է հանել հայ հայրենասերի աչքերը, կտրել քիթը, շրթունքները, ականջները և կրունկները։[2]

Ահա պարսից բանակի կողմից Էջմիածնի պաշարման ծանր օրերին կատարված հերոսական սխրագործության մի ուրիշ օրինակ։ Բյուրական գյուղի բնակիչ Իվան Ասլանյանը հանձն է առնում կարևոր գաղտնի կարգադրություն հասցնել Էջմիածնի կայազորի հրամանատարին, որին առաջարկվում էր ամեն գնով դիմանալ մինչև ռուսական օժանդակ զորքերի հասնելը։

Էջմիածնի վանքի շուրջը վիտացող պարսիկ պարեկները բռնում են Իվան Ասլանյանին։ Հարցաքննության ժամանակ Իվան Ասլանյանը հրաժարվում է հայտնելու, թե ինչու էր Էջմիածին գնում։ Պարսից սատրապը հրամայում է հանել նրա մի աչքը և կտրել նրա քիթը։ Բայց դրանից հետո էլ պարսիկներին չի հաջողվում կոտրել հայրենասեր գյուղացու կամքը։ Կատաղած սատրապը հրամայում է կտրել Ասլանյանի լեզուն։ Կարծելով, որ Ասլանյանը մեռած է, պարսիկները թողնում են արյունաշաղախ և ուշաթափ եղած Ասլանյանին և հեռանում։ Որոշ ժամանակից հետո ուշքի գալով, Ասլանյանը հավաքում է վերջին ուժերը, հասնում Էջմիածին և մեծ դժվարությամբ հաղորդում իրեն տրված հանձնարարությունը։ Իվան Ասլանյանը պարգևատրվում է ոսկե մեդալով և նրան տրվում է ցմահ կենսաթոշակ։

[1] ЦГИА Грузинской ССР, ф. 8, д. 1902.

[2] ЦГИА Грузинской ССР, ф. 8, д. 1902, л. 7—8։ Տես նաև Потто—„Кавказская война в очерках...", т. III, стр. 478.

Նույնիսկ իր բնավորությամբ անբարյացակամ և պարգևներ տալու հարցում ժլատ գեներալ Պասկևիչը հարկադրված եղավ կառավարության առաջ հարց հարուցելու պարսիկների դեմ մղվող պատերազմական գործողությունների ժամանակ իրենց խիզախությամբ և անձնազոհությամբ աչքի ընկած մի ամբողջ շարք հայերի շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու մասին։[1]

Մարտական ծառայությունների համար ռուսական շքանշաններով պարգևատրված առաջին հայերի թվումն էին Թիֆլիսեցի Ռոստոմ Լաչինովը, կարսեցի Մակարը, Հարություն Անտոնովը, Մարգիս Ալեքսանովը։ Գեորգևյան խաչով և ոսկե մեդալով պարգևատրվեց նաև Հարություն Ալթունովը, որը պարսիկների կողմից Շուշու բերդի պաշարման ժամանակ կամավոր կերպով հանձն էր առել անցնել թշնամու զորքի միջով և գեներալ Երմոլովին տեղեկություններ բերել բերդի վիճակի մասին։[3]

1827 թվականի մայիսի 27-ին և 30-ին, այսինքն Երևանի վրա կատարած արշավանքի առաջին օրերին, գեներալ Պասկևիչը հատուկ զեկուցագրերով ռուսական զորքերի գլխավոր շտաբի պետ գեներալ Դիբիչի առաջ միջնորդում էր պարսիկների դեմ մղված մարտերում աչքի ընկած պրապորշչիկներ Մարտիրոս Վեքիլովին և Գրիգոր Քալանթարովին[4] պարգևատրելու համար։

Հայ հայրենասերների, անձնազոհ հերոսների թիվը, որոնց անունները չեն մտել պաշտոնական պատմության մեջ, օրեց-օր աճում էր։ Գեներալ Պասկևիչը, որն առանձին համակրանք չէր տածում դեպի հայերը, քանիցս հարկադրված էր գնահատել նրանց մատուցած ծառայությունները և նշել հայերի նվիրվածությունը Ռուսաստանին։[5]

Բերված փաստերը պատկերացում են տալիս այն օգնության մասին, որ հայերը ռուսական զորքերին ցույց տվին Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու համար մղված մարտերի ժամանակ։ Այդ փաստերը վկայում են նաև, որ Երևանի ազատագրման համար մղված համատեղ պայքարում էլ ավելի ամրապնդվեց ու կոփվեց հայ և ռուս ժողովուրդների բազմադարյա բարեկամությունը, խորացան նրանց քաղաքական կապերը։ Դա վկայում է հայ ժողովրդի խոր սերը, անսահման վստահությունը ռուս ժողովրդի նկատմամբ։ Եվ, վերջապես, այդ փաստերը վկայում են, որ Հայաստանի ազատագրության համար ռուսների հետ միասին մարտնչող հիմնական ուժը հայ աշխատավորներն էին, հայ գյուղացիները։ Ռուսական զենքի հաջողություններից թև առած, նրանք Հայաստանի ազատագրության գործը համարում էին իրենց սեփական գործը։

Ռուսական զորքերին ցույց տրվող ռազմական օգնությունից բացի հայերը ռուսական հրամանատարությանը սիստեմատիկաբար հաղորդում էին ռազմական կարևոր տեղեկություններ։

Այսպես, օրինակ, Ցիցիանովի կողմից Երևանի բերդի պաշարման ժա-

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 6218, л. 19.
[2] ЦГИА Грузинской ССР, ф. 1025, д. 119, лл. 26, 58.
[3] В. Потто, „Первые добровольцы Карабага", Тифлис, 1902, стр. 63.
[4] ЦГВИА, ф. ВУА, д. 6218, л. 19.
[5] Նույն տեղում։

մանակ շատ հայեր կամավոր կերպով, վտանգի ենթարկելով իրենց կյանքը, բազմակողմանի օգնություն էին ցույց տալիս ռուսներին՝ նրանց համար կարևոր տեղեկություններ բերելով պաշարված քաղաքի և բերդի վիճակի մասին, ռուսներին մատակարարում էին հաց և այլ սննդամթերքներ, սիրով խնամում էին ռուս վիրավոր զինվորներին և այլն։

Երևանի բնակիչ Ե. Խուբովի վկայությամբ հայերը, որոնք լավ իրազեկ էին պարսկական ուժերի տեղադրությանը, Ցիցիանովին հաղորդեցին, թե որ կողմից պետք է հարված հասցնել բերդին, որպեսզի պարսիկները սարսափած լինեն անձնատուր լինելու։

Երևանի հայերը խորհուրդ էին տալիս, գրել է Խուբովը, որ «...Ռուսները եթե սկսեն պաշարել բերդը, ապա պետք է գործեն ավելի շատ բերդից դեպի արևելք գտնվող բարձունքից, որովհետև այդ կողմը մյուսներից ավելի թույլ էր ամրացված (որը հայտնի էր միայն մեծահասակ մարդկանց), այնպես որ ոչ մի արկ չէր կարող աննպատակ անցնել։ Ի միջի այլոց, տեղեկացնում էին նաև այն, որ ռուսները կարող են պաշարներ ստանալ Էջմիածնից, որտեղ կային հացի մեծ պահեստներ, որոնք, սակայն, որոշ չափով ավերվել էին պարսիկների ձեռքով»[1]

Երբ կատաղի մարտերը, պարենային դժվարությունները ու լայնորեն տարածված տենդը, օրեցօր սկսեցին ավելացնել վիրավորների և հիվանդների թիվը Ցիցիանովի զորքերի մեջ, տեղացի հայերն ակտիվ մասնակցություն ունեցան վիրավորներին մարտադաշտից տեղափոխելու գործում, կազմակերպեցին այն ժամանակվա համար հնարավոր խնամք հիվանդ ու վիրավոր զինվորներին։

Ցիցիանովի արշավային օրագրում այդ առթիվ նշված է.

«Հրամայվեց պատրաստել անհրաժեշտ թվով պատգարակներ վիրավորների համար և հայկական քահանայապետից պահանջվեց դրանք տեղափոխելու համար տրամադրել երևանյան հայեր, որոնք այսօր մեծ թվով ներկայացան մեզ ինչպես շրջակա գյուղերից, այնպես էլ բուն քաղաքից»[2]

Երևանի վրա կատարված բոլոր արշավանքների ժամանակ հայերը մեծ օգնություն էին ցույց տալիս ռուսական զորքերին, մասնավորապես ռուսական հրամանատարությանը արժեքավոր տեղեկություններ հաղորդելով թշնամու ուժերի տեղադրության մասին։

Հայերի հաղորդումներից ռուսական հրամանատարությունն ամենամանրամասն տեղեկություններ էր քաղում հակառակորդի թվական կազմի, զենքի և զինված ուժերի տեսակների մասին։ Պատերազմական գործողությունների ժամանակ հայերը ուշադիր հետևում էին պարսկական զորքերի գործողություններին. հաճախ իմանալով պարսիկների ստրատեգիական պլանները, նրանք շտապում էին անմիջապես դրանք հայտնել ռուսական հրամանատարությանը։

Որպես ապացույց կբերենք բազմաթիվ փաստերից միայն մի քանիսը։

Գեներալ Ցիցիանովի Երևանյան արշավանքի ժամանակ Երևանի բնակիչ Ստեփան Տեարուսովը Թիֆլիս ժամանելով Մուշկեաևբյան գնդի գրն-

[1] Е. Хубов. „Описание достопамятных происшествий в Армении", СПБ, 1811, стр. 52—53.

[2] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, л. 65.

գասպետ Մոնտրեզորին հաղորդում է, որ պարսկական 40 հազարանոց բանակը պատրաստվում է արշավելու Թիֆլիսի վրա։[1]

Թիֆլիսի բնակիչ Սիմեոն Թալախովը 17-րդ Եգերյան գնդի շեֆգրնդապետ Կարյագինին ծանոթացնում է Թավրիզում ապրող իր եղբոր գրած նամակի հետ, որով նա հաղորդում էր, թե պարսկական զորքերը պատերազմական գործողություններ են պատրաստում ռուսների դեմ։[2]

Նույն այդ գնդապետ Կարյագինը գեներալ Ցիցիանովին մի շարք արժեքավոր տեղեկություններ է հաղորդում պարսկական զորքերի դիսլոկացիայի և թվի մասին, պարսիկների մոտակա օպերատիվ պլանների մասին, որոնք Թավրիզից ուղարկել էր Հարություն Դասպարովը։[3]

Ռուսական հրամանատարությանը հաղորդված նման տեղեկությունները զգալի դեր խաղացին ռուսական արշավանքների հաջող կազմակերպման և նախապատրաստման գործում։ Առաջխաղալով միանգամայն անծանոթ տերիտորիայով, ռուսական զորքերը օգտվում էին հայերի ծառայություններից, որոնք հանկես էին գալիս որպես փորձված անձնազոհ ուղեցույցներ ու հետախույզներ։ Նրանք վստահ կերպով ռուսական զորքերը տանում էին դժվարանցանելի լեռնանցքներով ու կիրճերով, անհայտ ճանապարհներով և հազիվ նկատելի կածաններով, հաճախ շրջանցելով թշնամու զորքերին։

Մեծ էր հայերի դերը նաև պարսկական թիկունքի կազմալուծման ու բարոյալքման գործում։ Ռուսական արշավանքների ժամանակ հայերը ռուսների օգտին լայն պրոպագանդա էին ծավալում պարսիկների թիկունքում և նույնիսկ պարսկական զորքերի մեջ։ Հայերն իրենց պրոպագանդայով հաճախ խուճապ էին առաջ բերում պարսկական բանակի շարքերում, թուլացնում հակառակորդի մարտունակությունը, աճեցնում բնակչության դժգոհությունը պարսկական բռնապետությունից։ Կան ոչ քիչ փաստեր, երբ պարսիկների և ռուսների կռվի ամենակրիտիկական պահին հայ բնակչությունն ամբողջությամբ անցնում էր ռուսների կողմը։

Հենց այդպիսի երևույթ տեղի ունեցավ 1827 թվականի հոկտեմբերի 1-ին, Երևանի բերդի վրա գեներալ Պասկևիչի ձեռնարկած գրոհի ժամանակ. ճակատամարտի ամենավճռական պահին Երևանի հայ բնակչությունը ապստամբեց և Հասան խանից պահանջեց բերդը հանձնել ռուսներին։ Իսկ երբ Հասան խանը սպառնալիքներ կարդալով և հայհոյելով հրաժարվեց կատարել այդ պահանջը, հայերը բերդի պարիսպների ճեղքերից դուրս եկան ռուսներին ընդառաջ։

Ռուսաստանի նկատմամբ ունեցած իրենց նվիրվածության և ռուսներին մատուցած իրենց ծառայությունների համար հայերը հաճախ զոհում էին իրենց կյանքը։ Երբ Պասկևիչը պաշարեց Երևանի բերդը, Ներսես Աշտարակեցին դիմեց հայ բնակչությանը, կոչ անելով ամեն կերպ օգնություն ցույց տալ ռուսներին։ Այդ կոչերը տարածող հայերը շատ լավ հասկանում էին, որ եթե իրենք ընկնեն պարսկական դահիճների ձեռքը, ապա չեն ազատվի մահապատժից։ Եվ իսկապես, ոչ քիչ թվով անվեհեր հայրենասերներ զոհվեցին ատելի ստրկացնողների ձեռքով։ Այդ պրոկլամացիա-

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4259, т. V, л. 61.

[2] Նույն տեղում, л. 63։

[3] Նույն տեղում, л. 69։

ները տարածելու համար պարսկական դահիճների կողմից գազանարար տանջման արվածների թվում էր Երևանի բնակիչ Աստվածատրյանը, որի մասին Ա. Երիցյանը գրել է հետևյալը.

«Ներսեսը անդադար ապդարարություններ էր ուղարկում երևանցոց, որ անձնատուր լինին։ Նորա նամակները տանող բերողն էին անձնվեր հայ կտրիճները։ Մեկը դոցանից, ումն Աստվածատրյան բռնվեցավ Ներսեսի խռովարար պրոկլամացիները բաժանելիս. Պարսիկները դրին նրան թնդանոթի մեջ և կրակ տվին»։[1]

Մեծ էր Շորագյալի շրջանի հայերի օգնությունը ռուսական զորքերին, ինչը նշել է նաև Պ. Կովալևսկին.

«Գեներալ Տուչկովը մտավ Շորագյալ։ Այստեղ նրան միացան հարյուրավոր հեծյալ հայեր։ Հարկավոր է արդարը հաստատել՝ հայերը ամենուրեք մեր հավատարիմ դաշնակիցները, հետախույզները և օգնականներն էին»։[2]

Երևանի և Երևանի մարզի հայ բնակչությունը, սաստիկ ատելություն տածելով պարսիկ զավթիչների նկատմամբ, Երևանի Սարդարի և պարսից շահի աչքում պարսկական լծին սպառնացող վտանգի մի պահեստ էր։ Բավական էր մի փոքրիկ կայծ, որ այդ վտանգը հօդս ցնդեր, հողմացրիվ անելով նրա վրա կառուցված պարսկական բռնապետության շենքը։ Եվ այդ կայծը,— որը ելք տվեց պարսից բարբարոսական տիրապետության դեմ հայ բնակչության մեջ երկար տարիների ընթացքում կուտակված ատելությանը,— հանդիսացավ ռուսական զորքերի արշավանքը Երևանի վրա։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները սովորեցնում են, որ պատերազմի ելքը որոշվում է մշտապես գործող ֆակտորներով։ Թիկունքի կայունությունը և ամրությունը նրանք համարում են պատերազմի ելքը որոշող մշտական և վճռական ֆակտորներից մեկը։

Իր ժամանակին Վ. Ի. Լենինը հետևյալ կերպ է ձևակերպել այդ պայմանները.

«Պատերազմ մղելու համար իսկապես անհրաժեշտ է ամուր կազմակերպված թիկունք...»։[3]

Սովետական Բանակի 24-րդ տարեդարձի առթիվ հրապարակած հրամանում, մի շարք ելույթներում, զեկուցումներում և աշխատություններում Ի. Վ. Ստալինը նույնպես «թիկունքի ամրությունը», «բանակի բարոյական ոգին» մատնացույց է արել որպես պատերազմում հաղթանակ տանելու կարևոր ֆակտորներ։[4]

Ելնելով մարքսիզմ-լենինիզմի կլասիկների այդ դրույթներից, մենք կարող ենք պնդել, որ երկրորդ ռուս-պարսկական պատերազմում պարսիկների պարտության հիմնական պատճառներից մեկը նրանց թիկունքի խախուտությունը, թուլությունն էր։ Իսկ պարսկական թիկունքի թուլացման գործում վճռական դեր խաղաց նրանց կողմից կեղեքվող հայերի և մյուս ժողովուրդների թշնամական վերաբերմունքը դեպի պարսիկները։

---

[1] Ա. Երիցյան, «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում», մասն Ա., էջ 303։

[2] П. Ковалевский, „Завоевание Кавказа Россией", СПБ, изд. второе, стр. 98.

[3] В. И. Ленин, Собр. соч., изд. III, т. 22, стр. 304.

[4] Ի. Վ. Ստալին, Սովետական Միության հայրենական Մեծ պատերազմի մասին։

Հայերին բռնությամբ արտաքսելու և նրանց ֆիզիկապես ոչնչացնելով իրենց թիկունքն ամրապնդելու ուղղությամբ պարսիկների կատարած բոլոր փորձերը մատնվեցին անհաջողության։ Հայերը ոչ միայն մեծ ցընծությամբ էին դիմավորում ռուսական զորքերին, այլև իրենց ակտիվ գործունեությամբ քայքայում ու իարխլում էին պարսկական թիկունքը, դրանով իսկ նպաստելով ռուսների հաղթանակին։

Երևանի վրա շարժվող ռուսական զորքերին Երևանի և Երևանի շրջակայքի հայերը մեծ աջակցություն ցույց տվին նաև նյութական տեսակետից, որը շատ կարևոր նշանակություն ունեցավ արշավանքների հաջող ավարտման համար։ Թիֆլիսի և Երևանի միջև բարեկարգ ճանապարհների բացակայությունը, անձրևներից և ձյան հյուսերից ճանապարհների հաճախակի փչանալը և, վերջապես, պարսկական ու թյուրքական ավազակախմբերի մշտական հարձակումները՝ հաղորդակցության ճանապարհների երկարությամբ, խիստ դժվարացնում էին Երևանի մոտ գործող ռուսական զորքերին պարենամթերք և ֆուրաժ մատակարելու գործը։ Երևանյան բոլոր երեք արշավանքների ժամանակ ռուսական զորքերը պարենամթերքի և ֆուրաժի մեծ կարիք էին զգում։ Տեղական հայ բնակչությունը ռուսներին հաճախ ազատում էր դժվարին կացությունից, իր աղքատիկ պաշարների մի մասը (ալյուր, ցորեն, գարի, ձավար և այլն) հատկացնելով ռուսական զորքին։ Ռազմական արշավանքների ժամանակ ռուսական բանակին հայերի ցույց տված նյութական օգնության մասին Խուբովը գրել է.

«Նրանք (պարսիկները.—Զ. Գ.) իրենց առաջնակարգ մարդկանցից խորհուրդ կազմեցին, որտեղ հորինում էին մեզ կործանելու զանազան պատրվակներ։ Մեր դավաճան լինելու իսկական ապացույց էին համարում այն, որ մենք, որպես ռուսների դաշնակիցներ, հաց էինք հայթայթում նրանց, և մեզ հաշվում էին լրտեսներ իրենց բերդում, դրա համար էլ համաձայնեցին ժամանակավորապես թողնել արտաքին թշնամիներին, որպեսզի մեզ կոտորեին որպես իրենց ներքին թշնամիներից։»[1]

Բնակչության անշահախնդիր օգնության հետ միասին ռուսական զորքերի տրամադրության տակ դրվեցին Էջմիածնի վանքի պարենային բոլոր պաշարները։

Գեներալ Ցիցիանովի արշավանքի ժամանակ վանքի պաշարներից ռուսական զորքին տրվեց 4330 կոտ ցորեն, 1624 կոտ ալյուր, 600 կոտ բրինձ։[2] Բացի դրանից հայերը ռուսական զորքերին հայթայթում էին նաև չոր մրգեր, գինի, օղի և այլ մթերքներ։[3]

Ամառային ամիսներին, պատերազմական գործողությունների եռուն պահին, բանի տեղ չդնելով իրենց սպառնացող մահացու վտանգը, բնակչությունը հավաքում էր ցորենը, գարին, միրգը և հավաքած համարյա ամբողջ բերքը տալիս էր ռուսական զորքերին։

Զգալով թեթևացնել ռուսական զորքերի պարենային դժվարությունները, հայերը ոչ միայն իրենց սեփական պաշարները ձրիաբար տրամադրում էին նրանց, դաշտերից հավաքում և ռուսներին տալիս նոր բերքի հա-

[1] Е. Хубов. „Описание достопамятных происшествий в Армении", СПБ, 1811, стр. 60—68.

[2] Մատենադարան, թղթապանակ № 15, փաստաթուղթ 74։

[3] Նույն տեղում, թղթապանակ № 20, փաստաթուղթ 227։

ցանատիկը, այլև զինված ջոկատներով հարձակվում էին պարսիկների գումակների և նախիրների վրա, խլած անասունները և պարենամթերքը տալիս էին ռուսներին։[1]

Այդպիսի գեպքերից մեկի մասին գրված է Ցիցիանովի արշավային օրագրում.

«Հենց այսօր լուսաբացին բերդից պաշտպանության տակ գուրս քշեցին զգալի քանակությամբ անասուններ՝ կերի պակասության պատճառով դրանք լեռները տանելու դիտավորությամբ։ Սակայն կազակները և Մելիք-Ջումշուդի հայերը (ընդգծումը մերն է.— Զ. Գ.), մայոր Մոնտրեզորի օժանդակությամբ հարձակվելով պահպանության վրա, սպանեցին մեկ պարսիկ, մյուսին գերի վերցրին և խլեցին 69 գլուխ խոշոր եղջերավոր անասուն։»[2]

Գեներալ Պասկևիչի արշավանքի ժամանակ նման հարձակումներ գործում էին նաև հայկական մարտական գնդերը։ Հայկական առաջին մարտական գնդի այդ գործողություններից մեկի մասին գեներալ Պասկևիչի արշավային օրագրում 1827 թվականի հուլիսի 28-ին գրված է հետևյալը.

«Հայկական առաջին հարյուրյակի հրամանատար կապիտան Լազարևը, որն ամսույս 26-ին ուղարկվել էր խլելու Ալաջայի ամրության կայազորի հոտը, այսօր վերադարձավ և բերեց մոտ 300 անասուն։

Նա մոտ 40 վերստ անցել էր լեռներով և այնպես հաջող մոտեցել հոտին, որ հովիվները հազիվ էին կարողացել փրկվել։»[3]

Հայերի օգնությունը չէր սահմանափակվում միայն վերոհիշյալ բնույթի աջակցությամբ։ Այդ օգնությունը բազմազան ձևեր ուներ։ Այսպես, օրինակ, Ցիցիանովի կողմից Երևանի բերդի պաշարման ժամանակ, Թիֆլիսից ուղարկված արկերի ու ռազմամթերքի գումակի ուշանալը լուրջ դժվարություններ առաջ բերեց բերդը պաշարած ռուսական բանակի համար։

Այդ կրիտիկական պահին Ցիցիանովին օգնության հասան 60 հեծյալ խիզախ հայեր՝ Բոլնիսի մելիք Արովի որդի Ռոստոմ-բեկի հրամանատարությամբ. նրանք Փամբակ-Ապարանի վրայով, երկու անգամ մեծ քանակությամբ ռազմամթերք հասցրին Ցիցիանովի բանակին, ըստ որում երկրորդ անգամ զենքի և ռազմամթերքի պաշարը հասցվեց հուլիսի 14-ին՝ Ցիցիանովի զորախմբի վրա պարսկական բանակի հիմնական ուժերի հարձակման հենց նախօրյակին։ Նրանց հասցրած ռազմամթերքը վճռական դեր խաղաց պարսիկների դեմ ռուսների մղած ճակատամարտում, Ցիցիանովին ազատեց ստեղծված ծանր կացությունից, որի մասին Ցիցիանովն իր արշավային օրագրում հուլիսի 14-ին գրել է.

«Այսօր Փամբակից տեղ հասավ արկերի տրանսպորտը։ Կապիտան Սպիտակովը վկայեց, որ այդ էքսպեդիցիայի կատարման գործում գլխավոր օգնություն ցույց է տվել Մելիք-Արովի որդի հայ իշխան Ռոստոմ-բեկը։ Այսօր վանքից[4] եկավ նաև կապիտան Լևիցկին, իր հետ հայ բերելով։»[5]

Վերջին անգամ արկ բերելու ուղարկված հայկական հեծյալ ջոկատը

[1] ЦГВИА, ф. ВУА. д. 5258, лл. 86—126.
[2] ЦГВИА, ф. ВУА. д. 4258, л. 71.
[3] ЦГВИА, ф, ВУА. д. 4312, л. 158.
[4] Նկատի ունի Էջմիածնի վանքը (Զ. Գ.)։
[5] ЦГВИА, ф. ВУА. д. 4258, л. 74.

Փամբակի կիրճում հանդիպում է Փիր-Կուլի-խանի 8 հազարանոց բանակին և 3 հազարանոց օժանդակ զորքին։ Անհավասար մարտում զոհվում են ջոկատի համարյա բոլոր մարտիկները։ Ինքը Ռոստոմ-բեկը ծանր վիրավորվում է և գերի ընկնում պարսիկների ձեռքը։ Նա շղթայակապ ուղարկվում է Թավրիզ, որտեղ հայ անվեհեր հայրենասերը ենթարկվում է խիստ տանջանքների և գազանարար տանջամահ արվում պարսիկ դահիճների ձեռքով։

Այդ կապակցությամբ մենք ուզում ենք նշել պրոֆեսոր Լեոյի արմատական սխալը, որը գտնում է, թե հայերի կողմից ռուսներին ցույց տրված օգնությունը «իզուր զոհ» էր[1]։

Պրոֆ. Լեոն փորձում է իր «ցավակցությունը» հիմնավորել նրանով, որ ռուս գեներալները չէին գնահատում ոչ հայերի ցույց տված օգնությունը, ոչ էլ հայերի տված զոհերը։ Բայց Լեոն չի հասկացել, որ հայերի ցույց տված օգնությունը և նրանց կրած զոհերը ամենից առաջ ծառայել են նրանց սեփական հայրենիքի ազատագրման գործին, իսկ ցարական գեներալների կողմից նրանց մատուցած ծառայությունների կամ կրած զոհերի գնահատականը, վերջ ի վերջո, էական նշանակություն չունի։ Պրոֆ. Լեոն չի հասկացել նաև այն, որ հայ ժողովուրդն այդ բոլոր զոհերը տալիս էր հանուն իր իսկ ազգային շահերի, որ այդ դարաշրջանում ստեղծված պատմական իրադրությունը հայերից պահանջում էր սերտ համագործակցություն ռուսների հետ, պահանջում էր ամեն կերպ աջակցություն և օգնություն ցույց տալ ռուսական զորքերին։

Հայ ժողովուրդը խորապես շահագրգռված էր ռուս մեծ ժողովրդի հետ բարեկամություն ու համագործակցություն հաստատելու, այդ բարեկամությունը ամրապնդելու և խորացնելու գործում, որովհետև դրա մեջ և միայն դրա մեջ էր նա տեսնում իր փրկության ոեալ ուղիները, իր գոյության պահպանման ոեալ հնարավորությունները։

Ահա թե ինչու իր նվիրական իղձերի իրականացման՝ հայրենիքի ազատագրման համար հայ ժողովուրդը գիտակցաբար և հոժարությամբ ամենաակտիվ աջակցություն ու օգնություն է ցույց տալիս ռուսական զորքերին։

Երկրորդ ռուս-պարսկական պատերազմի ժամանակակից ու ականատես Խաչատուր Աբովյանն իր երկերում ցույց է տալիս այն հսկայական օգնությունը, որ Երևանի գրավման ժամանակ հայերը ցույց էին տալիս ռուսական զորքին։

«Ինչ որ պարսից կռվի ժամանակին հայքն արին....— ասում է Խ. Աբովյանը,— թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտանա»[2]։

2

Կարելի է համարձակ ասել, որ հայ ժողովրդի գրեթե բոլոր խավերի համակրանքը ռուսների կողմն էր։ Սակայն չի կարելի չընդգծել, որ ռուսներին ամենահետևողական և ամենաակտիվ օգնություն ցույց էին տալիս հայ աշխատավոր գյուղացիները։

Միայն կլիներ հավասարության նշան դնել ռուսների նկատմամբ հայ

[1] Լեո, «Հայոց պատմություն», նորագույն շրջան, մ. II, էջ 234, 235 և 236 (ձեռագրի իրավունքով)։

[2] Խ. Աբովյան, Ընտիր երկեր, Երևան, 1939, մ. I, էջ 143։

բոլոր հասարակական խավերի վերաբերմունքի մեջ։ Դրա համար էլ պատմական իրականության ուղղակի ֆալսիֆիկացիա, հայ հոգևորականության իդեալականացում է հանդիսանում հայ կղերա-բուրժուական պատմագրության այն պնդումը, թե Էջմիածնի կաթողիկոսությունը գլխավոր դեր էր խաղում ռուս-պարսկական պատերազմների ժամանակ։

Հարցի բազմակողմանի ուսումնասիրությունն անհերքելիորեն ապացուցում է, որ ռուսների և Ռուսաստանի նկատմամբ իր համակրանքի մեջ Էջմիածնի կաթողիկոսությունը վարում էր շատ զգույշ քաղաքականություն, որը հաճախ հասնում էր փոքրոգության և իրագործությունների նկատմամբ պասսիվ վերաբերմունքի։

Էջմիածնի կաթողիկոսության այդպիսի զգույշ վարքագիծը բացատրվում է ամենից առաջ հոգևորականության դասակարգային սահմանափակությամբ և այն բանով, որ Էջմիածինը գտնվում էր Երևանի խանի և պարսից շահի ուժեղ վերահսկողության տակ։

Կաթողիկոսության նման վարքագծի վրա ազդում էին նաև գեներալներ Ցիցիանովի և Դուգովիչի պատերազմական անհաջող գործողությունները Երևանի տակ։

Էջմիածնի կաթողիկոսությունը Հայաստանի ազատագրման մեծ գործում ոչ միայն «ակտիվ օգնություն» ցույց չէր տալիս ռուս և հայ ժողովուրդներին, այլև հաճախ հալածում էր հայ ազատագրական շարժման ղեկավարներին (Հովսեփ Էմին, Շահամիր Շահամիրյան), որոնք գնում էին ոչ միայն Արևելյան Հայաստանը պարսից լծից ազատագրելու հարցը, այլև Ռուսաստանի հովանավորության տակ ռեսպուբլիկայի ձևով հայ ինքնուրույն պետություն կազմակերպելու հարցը։

Հնդկահայերի ազատագրական շարժման ղեկավարներ Հովսեփ Էմինը և Շահամիր Շահամիրյանը 18-րդ դարի երկրորդ կեսին հանգեցին այն հաստատ համոզմանը, որ Հայաստանը պարսկա-թյուրքական լծից կարող է ազատագրվել միայն Ռուսաստանի օգնությամբ, նրանք միաժամանակ դեմ էին բացարձակ միապետությանը, ճորտատիրությանը, ֆեոդալական եկեղեցական խավարամտությանը և քարոզում էին լուսավորության ու ազատության գաղափարներ։

Էջմիածնի կաթողիկոսությունը, համակրելով հանդերձ Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը թյուրք-պարսկական լծից ազատագրելու ծրագրին, թշնամաբար էր վերաբերվում այն ժամանակվա պրոգրեսիվ գաղափարներին՝ ռեսպուբլիկական կարգի, լուսավորության ազատության սկզբունքներին և հալածում էր այդ գաղափարները քարոզողներին։

Հայ ազատագրական շարժման խոշոր գործիչ Հովսեփ Էմինը, 18-րդ դարի 60-ական թվականներին այցելելով Էջմիածին, մեծ հույսեր էր դնում Հայաստանի ազատագրման իր ծրագրած պլանի իրականացման գործում Էջմիածնի կաթողիկոսության օգնության վրա։ Էմինը խորապես սխալվեց իր հաշիվների մեջ։ Էջմիածնի եկեղեցականները թշնամաբար վերաբերվեցին Էմինի նկատմամբ, նա նույնիսկ կալանքի տակ վերցվեց կարճ ժամանակով, իսկ այնուհետև վտարվեց Էջմիածնից։ Զսահմանափակվելով դրանով, եկեղեցականները շարունակեցին թունավոր ինտրիգ լարել Էմինի դեմ, երբ նա գտնվում էր Վրաստանում և Ղարաբաղում։

Էջմիածնի կղերականությունը թշնամական վերաբերմունք ցույց տվեց

նաև հնչակահայերի ազատագրական շարժման մյուս ղեկավարի՝ Շահամիր Շահամիրյանի ծրագրին։

Էջմիածնի միաբանությունը բացահայտ չարությամբ դիմավորեց Շահամիր Շահամիրյանի տպարանում լույս ընծայված «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» և «Որոգայթ փառաց» գրքերը, որոնց մեջ շարադրվում էր հնչակահայերի քաղաքական ծրագիրը, թվարկվում էին Հայաստանի ազատագրման անհրաժեշտ միջոցառումները։ Էջմիածնի հոգևորականությունը, Սիմեոն կաթողիկոսի գլխավորությամբ, ոչ միայն համամիտ չգտնվեց Շահամիրյանի քաղաքական հայացքներին, այլև խոչընդոտ հարուցեց նրանց տարածմանը։ Բանը հասավ այնտեղ, որ Սիմեոն կաթողիկոսը, օգտագործելով «Ամենայն հայոց հովվապետի» իր կոչումը, Շահամիրյանին և նրա համախոհներին առաջարկեց հետևյալ պահանջները.

ա) Անհապաղ փակել տպարանը՝ խռովարար գրքերի տպագրությունը դադարեցնելու համար։

բ) Հավաքել և այրել «Որոգայթ փառաց» և «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» գրքերը։

գ) Դադարեցնել Ղարաբաղի մելիքների հետ սկսված քաղաքական բանակցությունները։

դ) Անհապաղ թողնել այդ «սխալ» և «անմիտ» ուղին։

ե) Պատժել Մովսես Բաղրամյանին, որպես խռովարար գրքերի հեղինակի։

Կաթողիկոսը սպառնում էր իր պահանջներին չհնազանդվելու դեպքում «... Հասարակածանոյց կոնդակաւ գրել յամենայն երկիր զանօրինակ արարմունսդ ձերդ։»[1]

Բերենք մի օրինակ ևս. երբ ռուսական զորքերը ձեռնարկում էին իրենց արշավանքները Երևանի վրա, երբ հայ աշխատավոր ժողովուրդը միանում էր ռուսական զորքերին, Երևանի մարզի ազատագրման համար մղվող պայքարում, — պահանջվում էր հայ ժողովրդի բոլոր ուժերի միավորումը միասնական նպատակի՝ ընդհանուր թշնամու դեմ պայքարի գործում։ Բայց այդպես չվարվեց հայ բարձր հոգևորականությունը։ Այդ պատասխանատու պահին եկեղեցականները գժտված էին Նոր կաթողիկոսի ընտրության հետ կապված վեճերով և ինտրիգներով։ Այդ անմիտ պայքարն ուշադրություն չեղում էր Հայաստանի ազատագրման հարցից։

Կաթողիկոսության թեկնածուներից յուրաքանչյուրը ստորաքարշություն էր անում պարսիկների և թյուրքերի առաջ, անտես էր առնում հայ ժողովրդի ամենակենսական շահերը, դավաճանության գնով ձգտելով ապահովել իր ընտրությունը։

Այդ գժտությունները ձեռնտու էին միայն պարսիկ և թյուրք զավթիչներին, նրանց կողմից օգտագործվում էին հայերին էլ ավելի ստրկացնելու համար։

Այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը ռուս զորքի հետ միասին պայքարում էր հայրենիքը պարսկական լծից ազատագրելու համար, Էջմիածնի կաթողիկոսությունը դեռևս տատանվում էր իր դիրքը որոշելու հարցում։ Այդ տատանումները երբեմն հանգեցնում էին նույնիսկ այն բանին, որ

[1] «Դիվան հայոց պատմության», Թիֆլիս, 1908, գիրք 8, մ. 2, էջ 579։

[2] Մատենադարան, թղթապանակ № 18, փաստաթուղթ 18։

Էջմիածնի կաթողիկոսն առանձին նամակներով դիմում էր Նապոլեոնին՝ օգնություն սպասելով Ֆրանսիայից։

Արևմտաեվրոպական տերությունների կեղծ հավատիացումներով և խոստումներով գայթակղված, Էջմիածինը կառչում էր նրանց էմիսարների փեշերին։ Այսպես, օրինակ, գեներալ Գարդանի միսիայի Պարսկաստան գալու ժամանակ՝ Էջմիածնի կաթողիկոսությունը ֆրանսիական դեսպանի միջոցով երկու անգամ դիմեց Նապոլեոնին՝ հովանավորություն և պաշտպանություն որոնելով։

1808 թվականի ամռանը Դանիել կաթողիկոսը, ընդունելով Պարսկաստանից Ֆրանսիա վերադարձող՝ Պարսկաստանի ֆրանսիական դեսպանատան աշխատակից Ժան-Բատիստ Բուասոնին, նրա միջոցով Նապոլեոնին ուղարկեց մի խնդրագիր, որի մեջ սարկամտորեն գրում էր.

«... զի ուր տարածեսցի ողորմութիւն Աթոռոյ Ձերոյ Կայսերական մեծութեան եղիցի հովանի ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց»։[1]

Էջմիածնի կաթողիկոսը երկրորդ անգամ ուղերձով դիմում է Նապոլեոնին 1809 թվականի ապրիլին, երբ ֆրանսիական դեսպան գեներալ Գարդանը Թեհրանից Ֆրանսիա վերադառնալիս ճանապարհին այցելում է Էջմիածնի վանքը։

Այդ ուղերձի մեջ եկեղեցականները նույնպես գրում էին.

«... զի ուրև տարածեսս ի ողորմութեան Աթոռոյ Ձերոյ Կայսերական մեծութեան եղիցի հովանի ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց»։[2]

Սակայն Էջմիածնի կաթողիկոսի այդ փորձերը չէին համապատասխանում հայ ժողովրդի ցանկություններին ու շահերին։ Հայ ժողովուրդը անվերապահորեն ուներ ռուսական օրիենտացիա, և պատահական չէ, որ այդ փորձերը ոչ մի արդյունք չտվին և նույնիսկ Էջմիածնի կաթողիկոսությունը հետագայում, հատկապես 1826 — 28 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակաշրջանում, էլ ավելի ամրապնդվեց այն կարծիքի մեջ, որ միակ ռեալ ուժը, որը կարող է ազատագրել Հայաստանը, Ռուսաստանն է։

Բերված փաստերը բավականաչափ համոզիչ կերպով ցույց են տալիս, որ հայ բուրժուա-կղերական պատմագրությունը արմատապես սխալ էր Հայաստանի ազատագրման ժամանակ ռուսական օգնության գործում Էջմիածնի դերը ներկայացնելով իդեալականացված ձևով։

Այսպիսով, հանրագումարի բերելով մեր ասածը, մենք կարող ենք ասել, որ Հայաստանը պարսկական լծից ազատագրելու գործում ռուսներին հետևողականորեն և ակտիվ կերպով օգնող հիմնական ուժը հայ աշխատավոր ժողովուրդն էր, որը հարազատ երկրի ազատագրման վճռական պայքարում չէր խնայում ոչ իր արյունը և ոչ էլ կյանքը։

Բրանական լծից Անդրկովկասի ազատագրման գործում ռուսական բանակի շարքերում, ռուսական զորքերի և հայ կամավորական գնդերի հետ ուս-ուսի ուված, հերոսաբար կռվում էին նաև վրացական և ադրբեջանական կամավորական ջոկատները։

Պատմական մի շարք փաստեր այդ են վկայում։

Բերենք դրանցից մի քանիսը։

---

[1] «Հումա», գիրք առաջին, Թիֆլիս, 1897, էջ 296։

[2] Նույն տեղում, էջ 305։

Խոսելով երկրորդ ռուս-պարսկական պատերազմում վրաց աշխարհազորայինների մասնակցության մասին, Ա. Վ. Օրբելիանին գրել է.

«... Մի կիրակի (կամ թե մեկ շաբաթում) հավաքվեցին ավելի քան 6000 լավ զինված հեծյալներ, հանդերձավորված, իսկ գյուղերում կազմակերպվում էր հետևակազոր՝ լիակատար սպառազինությամբ։ Բոլորն ասում էին. «եթե հարկավոր լինի՝ բոլորս ամբողջովին դուրս կգանք, բայց իրանցիներին թույլ չենք տա մտնելու Վրաստան»։ Այնպիսի խանդավառություն էր տիրել բնակչության մեջ, որ եղբայրներն իրար հետ վիճում էին, թե ով մնա տանը և ով գնա պատերազմի, ամենքն էլ ձգտում էին կռվի»։[1]

Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու համար մղված պատերազմներում վրացիների կողմից ռուսական զորքերին ցույց տրված օգնության մասին պատմարան Գ. Վ. Խաչապուրիձեն գրում է.

«Վրացիները անմիջական մասնակցություն էին ցույց տալիս այդ պատերազմներին, որքան դա կապված էր հայրենի երկրի պաշտպանության հետ։ Նրանք ռուսական զորքերի հետ միասին առատորեն թափում էին իրենց արյունը։ Գլխավոր հրամանատարները, հաշվի առնելով վրացիների քաջությունը, տեղանքն ու հակառակորդի լեզուն իմանալը, հենց որ սկսվում էին պատերազմական գործողությունները, անհրաժեշտ էին համարում աշխարհազորայինների ջոկատներ կազմակերպել վրացիներից, որոնք բացառիկ ծառայություններ էին մատուցում կանոնավոր զորքերին»։[2]

Այդ պատերազմներին մասնակցած վրացիները ցուցաբերեցին հերոսություն և անձնազոհություն։ Խոսելով պարսիկների դեմ ուղղված Գանձակի ճակատամարտի մասին, Գ. Վ. Խաչապուրիձեն գրում է. «Թշնամու ձեռքից Անդրկովկասի ազատագրման համար մղված այդ ճակատամարտում աչքի ընկավ նաև վրացական աշխարհազորը»։[3]

Նման օրինակներ կարելի է բերել Անդրկովկասի ազատագրման պատերազմներում նաև ադրբեջանցիների մասնակցությունից։ Ռուսական բանակի հրամանատարությունը մի շարք փաստաթղթերում նշել է ադրբեջանական բնակչության մասսայական ձգտումը՝ մտնել աշխարհազորայինների ջոկատները և աջակցություն ցույց տալ ռուսական բանակին։ Այդպիսի փաստաթղթերից մեկում կարդում ենք.

«Մեզ պատկանող բոլոր մարզերի մահմեդականները թախանձագին խնդրեցին՝ թույլ տալ առաջիկա կամպանիայի ժամանակ կազմել շատ ավելի նշանակալից աշխարհազոր՝ մեր քաջ զորքերի սխրագործությունները բաժանելու համար...»։[4]

Այդ կամպանիաներին մասնակցած ադրբեջանցիները արիության և անձնվիրության օրինակներ ցույց տվին։ Խոսելով 1828—29 թթ. թյուրքական հորդաների դեմ մղված պատերազմում ադրբեջանյան աշխարհազորայինների ցուցաբերած քաջության մասին, ռուսական հրամանատարությունը նշել է. «Թյուրքերի դեմ ուղղված 1828 թ. կամպանիայի ըն-

[1] Музей Грузии им. С. Н. Джанашия, рукописный фонд, рукопись А. В. Орбелиани. Беспорядок в Грузии в 1829 г. ցիտված է Г. В. Хачапуридзе „К истории Грузии первой половины XIX века" գրքից։ Հրատարակչություն «Զարյա Վոստոկայի» 1930, էջ 178։

[2] Г. В. Хачапуридзе, Указ. соч., стр. 177—178.

[3] Նույն տեղում, էջ 165.

[4] Акты, т. VII, стр. 326.

թացքում մեր նահանգների մուսուլմանների հեծյալ աշխարհազորը, չնայած իր սակավաթիվ լինելուն, ծառայեց մեծ ջանասիրությամբ»[1]

Գեներալ Ի. Մ. Մուրավյովը հետևյալ գնահատականն է տալիս ադրբեջանական ռազմիկներին։ Նրանք «ծառայել են լավ և սարսափ էին թյուրքերի համար, ավարտելով մեր զորքերի տարած հաղթանակները փախչող թշնամուն հետապնդելու գործում, որի վրա հարձակվում էին զարմանալի արագությամբ և աննահանջ»[2]

3

Թուրքմենչայի հաշտությամբ մեր թեման սպառվում է։ Բայց մենք հարկ ենք համարում համառոտակի կանգ առնել նաև ռուս-թյուրքական պատերազմի (1828—1829 թթ.) անդրկովկասյան ռազմաճակատի պատերազմական գլխավոր գործողությունների վրա, որովհետև դա կարող է օգնել ավելի պարզորոշ պատկերացնելու այն, որ 19-րդ դարի սկզբին ոչ միայն արևելահայերն էին պարսկական լծից իրենց փրկությունը տեսնում ռուսական օգնության մեջ, այլև արևմտահայերն էլ ամբողջովին Ռուսաստանի կողմն էին և թյուրքական բարբարոսական ճնշումից իրենց փրկությունը նույնպես կապում էին ռուսների հետ։

Թեև ռուս-թյուրքական պատերազմը սկսվեց 1828 թվականի ապրիլին, սակայն անդրկովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունները սկսվեցին հունիսի 14-ին։ Այդ օրը ռուսական բանակը, Պասկևիչի հրամանատարությամբ, 12 հազար զինվորով և 70 թնդանոթով, անցավ Արփաչայը (Ախուրյան), իսկ հունիսի 19-ին խոշոր պարտություն պատճառեց Կարս բերդից դուրս եկած թյուրքական զորքերին։ Պասկևիչի բանակը հունիսի 23-ին հզոր հարձակում սկսեց Կարսի վրա։ Չնայած թյուրքերի ու ֆրանսիացիների, իսկ այնուհետև նաև անգլիացիների կառուցած պաշտպանողական ամրություններին, բերդը չդիմացավ։ Ռուսական զինվորների միահամուռ և քաջարի գրոհը պսակվեց Կարսի բերդի առումով։

Ռուսները Կարսում գրավեցին մեծ քանակությամբ զենք, ռազմամթերք, վերցրին շատ գերիներ, որոնց թվում նաև Կարսի փաշային։ Քաղաքի բնակչությունը, որ բաղկացած էր ավելի քան 2500 հայ տներից, անսահման ուրախությամբ ընդունեց ռուսական զորքերի մուտքը Կարս։

Կարսից հետո ռուսական բանակը գրավեց Ախալքալակը, այնուհետև արյունահեղ մարտերից հետո Ախալցիխան և, վերջապես, Արդահանը։

Ախալցիխայի գրավումից հետո Հայկական մարզի կառավարիչ գեներալ-մայոր Ճավճավաձեն, փոքրիկ զորագնդով, որ բաղկացած էր 1400 հետևակայիններից, 200 ձիավոր կազակներից և 400 հայ կամավորներից, և ադրբեջանական աշխարհազորայիններ մեկ ջոկատից, հարձակում սկսեց Հին Բայազետի վրա։ Հաջորդ օրը, այսինքն օգոստոսի 27-ին, Բայազետի տակ խոշոր ճակատամարտ տեղի ունեցավ ռուսական և թյուրքական բանակների միջև, որը վերջացավ թյուրքերի պարտությամբ։

Այն ժամանակ, երբ ռուսական հրետանին ոմբակոծությունի ենթարկեց Բայազետը, նրա հայ բնակիչները ապստամբություն բարձրացրին և օգնեցին ռուսներին՝ քաղաքի գրավման գործում։

---

[1] Акты, т. VII, стр. 326.

[2] „Русский архив", 1897, книга III, стр. 380.

Օգոստոսի 28-ին Բայազետի Բայլուր փաշան անձնատուր է լինում ռուսներին և նրանց հանձնում բերդի բանալիները։ Բայազետի հայ բնակչությունը անսահման ուրախությամբ ընդունեց ռուսական զորքերին։

«Անհնարին է նկարագրել այս տեղի բնակիչների, գլխավորապես հայերի, ցնծությունը, որոնք դուրս եկան դիմավորելու հաղթողներին»,— գրել է այդ առթիվ Ա. Ս. Գրիբոեդովը։

Ճավճավաձեի զորքերը Բայազետի գրավումից հետո սեպտեմբերի 12-ին գրավեցին Ալաշկերտը։ Վրա հասած ձմեռը Պասկևիչին ստիպեց ժամանակավորապես դադարեցնել պատերազմական գործողությունները, որոնք վերսկսվեցին միայն 1829 թվականի մայիսից։

Անգլիացիների դրդմամբ թյուրքական հրամանատարությունը խոշոր ուժեր կենտրոնացրեց, նպատակ ունենալով հետ վերցնել իր կորցրած տերիտորիաները և ռուսներին դուրս մղել Անդրկովկասից։ Անգլիական դիվանագիտությունն ակտիվորեն գործում էր նաև Պարսկաստանում, մտադրություն ունենալով Պարսկաստանին նոր պատերազմի հանելու Ռուսաստանի դեմ։ Պարսկաստանում արագորեն աճում էր թշնամությունը դեպի Ռուսաստանը։ Այդ թշնամության հետևանք հանդիսացավ ռուսական դեսպան Ա. Ս. Գրիբոեդովի գազանային սպանությունը, որը տեղի ունեցավ Թեհրանում, 1829 թ. հունվարի 30-ին։

Պասկևիչի բանակը սակավամարդ էր. նա չէր կարող օժանդակ ուժեր ստանալու հույս ունենալ, քանի որ ռուսական հրամանատարությունը թյուրքերի դեմ գործող իր հիմնական ուժերը կենտրոնացրել էր Բալկանյան ռազմաճակատում, որն այդ պատերազմում համարվում էր գլխավորն ու հիմնականը։ Իր բանակի մասնակի համալրման նպատակով Պասկևիչը անդրկովկասյան ժողովուրդներին կոչ արեց կամավորական գնդեր կազմել և մտնել ռուսական բանակի շարքերը։ Այդ կոչը լայն արձագանք գտավ Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում նաև հայերի մեջ։

Ռուսական բանակը 1829 թ. հունիսին խոշոր հաղթանակներ է տանում։ Հունիսի 19—21-ին Պասկևիչը Սողանլուի (հին Մեծրաց) լեռներում խորտակիչ հարված հասցրեց Ղարսի և Ախալցխայի վրա շարժվող թյուրքական բանակին և սրընթաց մոտեցավ Արևմտյան Հայաստանի հնագույն քաղաքներից մեկին՝ Էրզրումին (Կարին)։

Էրզրումը պաշտպանելու ուղղությամբ թյուրքական բանակի բոլոր փորձերը անհաջողության մատնվեցին։ Թյուրքական գլխավոր հրամանատար Հաջի Սայմի փաշան հարկադրված եղավ զենքը ցած դնել։ 1829 թվականի հունիսի 28-ին ռուսական բանակը հաղթականորեն մտավ Էրզրում։

Այդ այն օրերն էին, երբ ռուսական բանակի հետ Էրզրում ժամանեց Ա. Ս. Պուշկինը։

Էրզրումից հետո ռուսական բանակը գրավեց Խնուսը, Քեղին, Դերջանը, Բարերդը։ Ռուսական բանակն այդ նույն ժամանակ մեծ հաղթանակներ տարավ նաև Բալկանյան ռազմաճակատում։ Ռուսական բանակը թյուրքերից մաքրեց ամբողջ Բալկանյան թերակղզին, գրավեց Ադրիանապոլիսը և ընդհուպ մոտեցավ Կոստանդնուպոլսի դարպասներին։ Թյուրքիայի սուլթանական կառավարությունը շտապեց հաշտություն խնդրելու ռուսներից։

1829 թվականի սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում ստորագրվեց

հաշտության պայմանագիրը, որով և ավարտվեց ռուս-թյուրքական պատերազմը։

Կովկասյան ժողովուրդները, այդ թվում նաև հայ ժողովուրդը, ռուսական բանակներին լայն օգնություն ցույց տվին 1806—1812 թթ. և 1828—1829 թթ. ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ։

Շիրակի հայերը դեռևս առաջին ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ հետախուզական խոշոր աշխատանքներ ծավալեցին ռուսների օգտին։ Նրանք ռուսական բանակի հրամանատարությանը շատ արժեքավոր տեղեկություններ էին բերում Կարսի և մյուս շրջաններում գտնվող թյուրքական ռազմական ուժերի քանակի, նրանց սպառազինության, դիսլոկացիայի և այլ հարցերի վերաբերյալ։[1]

Պրոֆեսոր Լեոն 1806—1812 թթ. ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ հայերի կողմից ռուսական զորքերին ցույց տրված օգնության մասին գրում է.

«Հայերն արդեն վտանգել էին իրանց դրությունը նրանով, որ իրանց համակրություններով ռուսների կողմն էին և աջակցություն էին ցույց տալիս նրանց»։[2]

Իմանալով հայերի մեծ համակրանքը ռուսների նկատմամբ, թյուրքական իշխանությունները երկրորդ ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ ձեռնամուխ եղան հայ բնակչությանը սահմանամերձ շրջաններից, ինչպես նաև գլխավոր վարչական կենտրոններից բռնի կերպով արտաքսելու երկրի խորքը, նպատակ ունենալով դրանով խափանելու հայերի հնարավոր օգնությունը ռուսական զորքերին։

Մոսկվայի կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվի փաստաթղթերից մեկում այդ առթիվ կարդում ենք.

«Ցարգրադի բնիկ հայերից շատերին արտաքսում են Ասիայի խորքը, վախենալով բոցավառ սեր տեսնել նրանց մեջ դեպի ռուսական կայսրը, ինչպես և Պարսկաստանում»։[3]

Իր հերթին սահմանային շրջանների հայ բնակչությունը խուսափում էր Թյուրքիայի խորքը տեղափոխվելուց. հայ բնակչությունը ձգտում էր անցնել ռուսական սահմանը և ապաստան գտնել Արևելյան Հայաստանում՝ ռուսական հպատակության տակ։

Թյուրքական իշխանությունները, թույլ չտալու համար, որ հայ բնակչությունը գաղթի Արևելյան Հայաստան, դիմում էին ամեն տեսակ բռնի միջոցների, ընդհուպ մինչև այն բանի, որ քրդական զինված ջոկատներ էին ուղարկում հայկական սահմանամերձ գյուղերը, որպեսզի զենքի ուժով պահեն հայերին։ Այդ մասին Պասկևիչը իր օրագրում 1828 թվականի ապրիլի 9-ին գրում է.

«Բոլոր սահմանամերձ հայ գյուղերում տեղավորված են քրդեր, որպեսզի պահեն Թյուրքիայից մեր կողմն անցնելու փորձ կատարող հայերին»։[4]

---

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4259, ч. III, лл. 116—7, 121—123.

[2] Լեո, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, մ. 2, էջ 20, Երևան, 1927 թ., ձեռագրի իրավունքով։

[3] ЦГВИА, ф. ВУА, д. 4481, л. 5—6.

[4] Նույն տեղում, д. 4644, л. 5—6.

Ռուսական հրամանատարությունը, իր հերթին, երկրորդ ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ ավելի համարձակորեն և ավելի լայնորեն օգտագործեց հայերի համակրանքը։

Ռուս-թյուրքական պատերազմի նախօրյակին ռուսական հրամանատարությունը սկսեց նորանոր կամավորական զինվորական միավորումներ կազմակերպել Երևանի և նրա շրջակայքի հայերից, նպատակ ունենալով օգտագործել դրանք սահմանների պաշտպանության գործում, ինչպես նաև Թյուրքիայի հետ սպասվող պատերազմում։ Այդ նպատակով 1828 թվականի փետրվարին կազմակերպվեց հայկական խոշոր գունդ։ 400 հայերից կազմված հեծյալ զորամասին ենթադրվում էր տալ Հայկական Առաջին հեծյալ գունդ անունը, իսկ 800 հայերից կազմված հետևակային զորամասին՝ Երևանյան Հայկական հետևակային գումարտակ անունը։[1]

Ռուս-թյուրքական պատերազմի առաջին իսկ օրից Պասկևիչի բանակի շարքերում թյուրքական բանակի դեմ հաջողությամբ կռվում էին 1000 հոգուց կազմված հայկական հեծյալ գունդը և հայկական երկու հետևակային գումարտակները։[2]

Հետագայում, պատերազմական գործողությունների ծավալմանը զուգընթաց, Կարսում, Էրզրումում, Արդահանում, Բայազետում, Ալաշկերտում և այլ շրջաններում մեկը մյուսի հետևից կազմակերպվում էին հայկական նորանոր զինված գնդեր, որոնք նշանակալից դեր խաղացին պատերազմական գործողությունների ժամանակ։ Այդ գնդերից մեծ հռչակ ստացավ Բայազետցի Մելիք-Մարտիրոսի կազմակերպած գունդը, որի մարտիկների թիվը անցնում էր 500-ից։

Այդ պատերազմի ժամանակ ռուսական բանակների կողմից հայկական խոշոր քաղաքների՝ Կարսի, Բայազետի, Էրզրումի (Կարին) գրավման գործում մեծ դեր են խաղում ինչպես այդ քաղաքների հայ բնակչությունը, այնպես էլ ռազմաճակատում գործող հայկական զորամասերը։

Նույնիսկ փառասեր Պասկևիչը, որն իրեն էր վերագրում ռուս թյուրքական ռազմաճակատում տարած բոլոր հաղթանակները, հաճախ հարկադրված էր լինում խոստովանելու հայերի ռազմական ակտիվ օգնությունը։ Նիկոլայ 1-ինին ներկայացրած իր զեկուցագրերից մեկում Բայազետի համար մղված մարտերում հայերի ռազմական մասնակցության մասին նա գրում է. «Բայազետում 2000 հայեր կռվում էին մեր զինվորների շարքերում»։[3]

Նման տեղեկություններ նա տալիս էր նաև Կարսի հայերի ցույց տված ռազմական ակտիվ օգնության մասին։

Կարսի գրավման գործում հայերի ցույց տված օգնության մասին բազմաթիվ ուշագրավ տեղեկություններ տալիս են նաև հայ պատմաբաններ Լեոն, Երիցյանը և ուրիշները։

Երկրորդ ռուս-թյուրքական պատերազմի ժամանակ հայերի անձնվեր պայքարի, ռուսների նկատմամբ նրանց մեծ համակրանքի վառ օրինակ կարող է ծառայել հայ կամավորների խիզախությունը և հերոսությունը

---

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4334, л. 8—9.

[2] Լեո, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, մ. 2, էջ 185։

[3] ЦГВИА, ф. ВУА, д. 1019, л. 3.

Բայազետի պաշարման ժամանակ։ 1829 թվականի հունիսին, երբ ռուսական բանակը Սողանլուի լեռներով հարձակվում էր Էրզրումի վրա, Վանի փաշան 15 000 զորքով և 12 թնդանոթով հարձակվեց Բայազետի վրա։ Հունիսի 20-ին սկսվեց Բայազետի նշանավոր պաշտպանությունը։

Բայազետի պաշտպանությունը ղեկավարում էին 1812 թվականի հայրենական պատերազմի մասնակիցներ գեներալներ՝ Պոպովը և Պանյուտինը, որոնք իրենց հրամանատարության տակ ունեին 1500 ռուս զինվոր և հայ կամավորների մի հազարյակ։ Ուժերը խիստ անհավասար էին։ Սակայն Բայազետի պաշտպանները մեծ խիզախությամբ և վճռականությամբ ետ մղեցին թյուրքական հորդաների բոլոր գրոհները։

Բայազետի պաշտպանության ժամանակ, ռուսների օրինակով, մեծ անձնազոհություն ցույց տվին հայ կամավորները։ «Հայերը կռվում և մեռնում էին ինչպես հերոսներ։ Նրանց հրամանատարները շարունակ գտնվում էին առաջին գծում և գիտեթե բոլորն էլ վիրավորվեցին»,— գրել է գեներալ-մայոր Պոպովը։

Շատ հայեր իրենց քաջության համար պարգևատրվեցին զինվորական մեդալներով։ Բայազետի հայերից Բարսեղ Արծրունին պարգևատրվեց «Խիզախության համար» մեդալով, Նահապետ Բաղալյանը՝ «Անձնվիրության համար» մեդալով և այլն։

Լեոն գրում է.

«Ղարսի թյուրք ազգաբնակության մեջ կազմվեց համոզմունք, որ եթե բերդն ընկավ մի օրվա մեջ, պատճառը հայերի դավաճանությունն էր, մեկ էլ այն, որ հրամանատար փաշան կաշառվել էր ռուսներից։ Եվ պարզ է, որ հայերը թյուրքերի կատաղության առարկա պիտի դառնային ոչ միայն Ղարսում, այլև ուրիշ տեղերում, ուր հասնում էր ռուսաց խոշոր հաղթության լուրը։ Իսկ հայերը հիմքեր շատ էին գտնում իրանց ռուսասիրության մեջ ավելի ամուր հաստատվելու համար»։[1]

Երիցյանը հայերի կողմից ռուսներին ցույց տրված ռազմական օգնության մասին գրում է. «... Բայազետցի, կարսեցի և արզրումցի հայք հետևակ և հեծելագունդ զորքեր տվին տաճկաց դեմ պատերազմելուց»։[2]

Հայկական ջոկատները կռվում էին ոչ միայն ռազմաճակատում. նրանք ստեղծում էին հայկական հատուկ միլիցիական հետևակային ու հեծյալ ջոկատներ, որոնք ռուսական սահմանները պաշտպանում էին թյուրքական և քրդական հորդաների հարձակումներից։[3]

Ռուս-թյուրքական պատերազմների ժամանակ հայերի կողմից ռուսներին ցույց տրվող օգնությունը բազմազան բնույթ ուներ։ Հայերը մեծ հոգատարություն էին ցույց տալիս ռազմաճակատում վիրավորված ռուս մարտիկներին։ Հայկական ՍՍՌ Պետական արխիվի փաստաթղթերից մեկում այդ մասին մենք կարդում ենք. «Հայերը այդ հիվանդանոցներին տալիս էին հարյուրավոր վերմակ, բարձ, շապիկ, վարտիկ, բրդե գուլպա ու ձեռնոց, որովհետև հիվանդանոցների սահմանափակ թվի պատճառով սպիտա-

[1] Լեո, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, մ. II, էջ 188—189։

[2] Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մ. I, էջ 454։

[3] ЦГВИА, ф. ВУА, д. 1019, л. 3, տես նաև „История военных действий в Азиатской Турции в 1828 и 1829 годах", СПБ, 1836 г., ч. I, стр. 76—77.

կեղենի և անկողնու պակաս կար։ Այսպիսով, Արզրումի մարզում ռուսների երևալուն պես հայերը գյուղերում ցույց էին տալիս իրենց ազգային սիրալիրությունը և հյուրասիրությունը... Յոթ օր շարունակ ձրիարար մթերքներ, հաց, ձավար, սոխ ու միրգ էին մատակարարում հիվանդանոցին... Բացի դրանից... Հիվանդների համար թախտեր պատրաստեցին վանքի տախտակներից. իսկ ներքնակները լցնելու համար ձրիարար խոտ էր տրվում. մի խոսքով, ամենուրեք հայերի մեջ ազնվություն, անշահախնդիր եռանդ երևան եկավ ռուսներին ծառայություն մատուցելու գործում»։

Ռուսաստանի նկատմամբ Արևմտյան Հայաստանի հայ աշխատավոր բնակչության անկեղծ նվիրվածությունը, իրենց հայրենիքի ազատագրության համար ռուս զինվորների հետ կողք-կողքի աննկուն մարտնչելու նրանց անսասան պատրաստակամությունը մեծ Պուշկինը գրի է առել իր «Ճանապարհորդություն դեպի Արզրում» գրքում։

Պուշկինը երգել է հայկական դաժան բնության առնական գեղեցկությունը, արտացոլել է հայ ժողովրդի ատելությունը դեպի թյուրք ստրկացնողները, իր ազատագրության համար աննկուն մարտնչելու նրա պատրաստակամությունը։

Ճանապարհի ամբողջ ընթացքում պոետն ամենասիրալիր և քնքուշ ընդունելություն է գտել հայ աշխատավորների կողմից։ Նա եղել է նրանց բնակարաններում, նրանց հետ գիշերել մեկ ծածկի տակ։ Այդ հայ հասարակ մարդկանցից, աշխատավորներից ոչ ոք, իհարկե, չգիտեր և չէր կարող գիտենալ, որ արժանացել է Ռուսաստանի փառքի, նրա հանճարեղ զավակի դեմքը տեսնելու մեծ պատվին։ Նրանք դիմավորում և ուրախանում էին Պուշկինով նրա համար, որ նա այն ժողովրդի ներկայացուցիչն էր, որի հետ հայերն անխզելիորեն կապել էին իրենց սեփական ճակատագիրը։ Նրանք ուրախ էին ռուս ուղևորին ամեն հնարավոր աջակցություն ցույց տալու համար։

Կարսում անցկացրած իր օրերի մասին, որտեղ Պուշկինը իջևանել էր հայ բնտանիքում, պոետը գրել է.

«Անձրևը հեղեղի նման թափվում էր ինձ վրա։ Վերջապես, մոտակա տնից դուրս եկավ մի հայ երիտասարդ և, խոսելով իմ թյուրքի հետ, ինձ կանչեց իր մոտ. նա բավականին մաքուր խոսում էր ռուսերեն։ Նա ինձ նեղ սանդուղքով տարավ իր տան երկրորդ հարկը։ Ցածր բազմոցներով և հին գորգերով զարդարված սենյակում նստած էր նրա պառավ մայրը։ Նա մոտեցավ ինձ և համբուրեց իմ ձեռքը։ Որդին նրան կարգադրեց կրակ վառել և ընթրիք պատրաստել ինձ համար։ Ես հանվեցի և նստեցի կրակի առաջ։ Մտավ տան տիրոջ կրտսեր եղբայրը, տասնյոթամյա մի պատանի։ Երկու եղբայրն էլ եղել էին Թիֆլիսում և միքանի ամիս ապրել այնտեղ։ Նրանք ինձ ասացին, որ մեր զորքերը նախորդ օրը շարժվել են և որ մեր լագերը գտնվում է Կարսից 25 վերստ հեռու։ Ես լիովին հանգստացա։ Շուտով պառավը ինձ համար ոչխարի միս տապակեց սոխով, որն ինձ թվաց խոհարարական արվեստի գլուխ գործոց. մենք բոլորս պառկեցինք քնելու մեկ սենյակում. ես պառկեցի մարող կրակարանի դիմաց և քնեցի հաճելի հույսով, թե հաջորդ օրը կտեսնեմ կոմս Պասկևիչի լագերը։ Առավոտյան ես գնացի դիտելու քաղաքը։ Իմ տան տերերից կրտսերը հանձն առավ չիչե-

բոնե գառնալ ինձ համար։ Դիտելով անառիկ ժայռի վրա կառուցված ամրությունները և միջնարերդը, ես չէի հասկանում, թե մենք ինչպես կարող էինք գրավել Կարսը։ Իմ հայրը, որքան կարող էր, բացատրում էր ինձ պատերազմական գործողությունները, որոնց նա վկա էր եղել։ Նկատելով, որ նա սեր ունի դեպի պատերազմը, ես նրան առաջարկեցի ինձ հետ գնալ բանակ։ Նա սիրով համաձայնեց»։[1]

Բավական մանրամասն դիտելով Կարսը և զարմանալով նրա ամրության վրա, Պուշկինը, իր բարեկամ Արտեմիի հետ, մեկնում է գործող բանակը։

«Կես ժամից հետո ես դուրս եկա Կարսից և Արտեմին (այդպես էր կոչվում իմ հայրը) արդեն սլանում էր իմ կողքին, թյուրքական նժույգի վրա, քրդական ճկուն տեգը ձեռքին, մեջքին դաշույն կապած, և զառանցելով թյուրքերի ու ճակատամարտերի մասին»։[2]

Ռուսական բանակի հետ Պուշկինը մտավ Էրզրում։ Նա այստեղ նորից ջերմ ընդունելություն գտավ հայերի կողմից։

Պուշկինին ուղեկցող Արտեմին, չհամբերելով, մյուսներից ավելի շուտ էր մտել Էրզրում։

«Մեր գնդերը մտան Արզրում, և հունիսի 27-ին, Պոլտավայի ճակատամարտի տարեդարձի օրը, երեկոյան ժամը 6-ին ռուսական դրոշը ծածանվեց Արզրումի միջնարերդի վրա,—գրում էր Պուշկինը... Մենք մտանք քաղաք, որը զարմանալի պատկեր էր ներկայացնում։ Թյուրքերն իրենց հարթ կտուրներից խոժոռ նայում էին մեզ վրա։ Հայերը ուրախ խոնվում էին մութ փողոցներում։ Նրանց տղաները վազում էին մեր ձիերի առջևից...

Մենք մոտեցանք բերդին, որտեղ մտնում էր մեր հրետանին. մեծ զարմանքով ես այդտեղ տեսա իմ Արտեմիին, որը շրջագայում էր քաղաքում, չնայած խիստ կարգադրություն կար, որ ոչ ոք լագերից չհեռանա առանց հատուկ թույլտվության»։[3]

Պուշկինի կողմից նկարագրված հայ բնակչության ցնծությունը ժամանակավոր էր։

Ադրիանապոլսի պայմանագրով Սև ծովի ափերը Նիկոլաևից մինչև Կուրան և Կուրանից մինչև Փոթի ներառյալ, Ախալցխայի Փաշայության մի մասը, Ախալքալակ և Ախալցխա քաղաքներով, անցան Ռուսաստանին։

Արևմտաեվրոպական և հատկապես անգլիական դաղութարարներին շահավետ չէր Ռուսաստանի ուժեղացումը։ Դրա համար էլ նրանք ամեն ջանք գործ դրին, որպեսզի ռուսներին թույլ չտային լիովին օգտվելու իրենց հաղթանակի պտուղներից։

Ադրիանապոլսի պայմանագրով, Անգլիայի ճնշման տակ, միանգամայն անարդարացի կերպով Թյուրքիային վերադարձվեցին Էրզրումը, Կարսը, Արդահանը, Բայազետը և մի շարք այլ շրջաններ։ Դժվար չէ պատկերացնել, թե որքան խոր հուզվեցին ու տխրեցին վերոհիշյալ շրջանների հայերը։ Իրենց վաղեմի երազը՝ թյուրքական բարբարոսությունից ազատագրվելը—նրանք արդեն համարում էին իրականացած, բայց այժմ դա նորից կորավ արևմտաեվրոպական տերությունների դավերով։ Արևմտահայերին

[1] А. С. Пушкин, Пол. собр. соч. в 9 томах, Москва, 1938, т. VII, стр. 748—749.
[2] Նույն տեղում, էջ 749։
[3] Նույն տեղում, էջ 767—768։

մնում էր օգտագործելու պայմանագրի այն կետը, որի համաձայն երկու կողմերի հպատակներին իրավունք էր վերապահվում մեկուկես տարվա ընթացքում իրենց ցանկությամբ տեղափոխվել մեկ երկրից մյուսը։

Այդ պայմանագրի կնքումից հետո հիշյալ ժամկետի ընթացքում մոտ հարյուր հազար հայեր տեղափոխվեցին Արևելյան Հայաստան, իսկ արևմտյան շրջաններում մնացած հայերի մեջ էլ ավելի ամրապնդվեց հավատը և հարգանքը դեպի ռուս ժողովուրդը։

Հանրագումարի բերելով, կարելի է ասել, որ անձնազոհ կերպով մարտընչելով պարսկա-թյուրքական բռնապետության և նրա թիկունքում կանգնած անգլիական ու ֆրանսիական գաղութարարների դեմ, աշխատավոր հայ մասսաները, հասկանալի է, որ ոգեշնչվում էին ոչ թե ռուսական ցարիզմի արտաքին-քաղաքական նպատակներով, այլ անխուսափելի կործանումից ազատագրվելու խնդրով, կործանում, որ սպառնում էր նրանց՝ պարսկական և թյուրքական բարբարոսական լուծը։ Նրանք ոգեշնչվում էին ռուս մեծ ժողովրդի հետ միավորվելու գաղափարով։ Աշխատավոր հայ ժողովուրդը Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո իր բախտը ամուր կերպով կապեց ոչ թե Արակչեևի ու Նիկոլայ Պալկինի Ռուսաստանի հետ, այլ ռուս մեծ ժողովրդի, նրա լավագույն ներկայացուցիչների հետ, Չերնիշևսկու, Բելինսկու, Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու Ռուսաստանի հետ։